

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Լուս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Հուղարկավորությունների Ղեկավարում

Վերջին թարմացումներ.

11/3/20. Շնչառական ախտանիշներ կամ ջերմություն ունեցող անձանցից կպահանջվի տուն վերադառնալ: Առաջարկվում է, որ նրանք զանգահարեն իրենց բուժաշխատողին՝ COVID-19-ի թեստավորման և մեկուսացման անհրաժեշտության հետ կապված:

Հուղարկավորությունները և գերեզմանատների ծառայությունները կարող են կատարվել հետևյալ պահանջներին համապատասխան.

- Ծառայությունները կարող են տեղի ունենալ բացօթյա տարածքներում՝ կախված ընտանիքի նախապատվություններից և կրոնական սովորություններից:
 - Բացօթյա իրականացվող ծառայությունների համար մասնակիցների թվի սահմանափակում չկա՝ պայմանով, որ միևնույն ընտանեկան տնտեսության անդամ խմբերի միջև հնարավոր լինի պահպանել 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն:
- Ձեռնարկվում են միջոցառումներ, որպեսզի բացօթյա տարածքներում անցկացվող արարողությունների մասնակիցներին ապահով կերպով հասանելի լինեն զուգարանները: Տարածքի ղեկավարները կարող են ընտրել շարժական բացօթյա զուգարաններ և լվացարաններ տրամադրել և/կամ հասանելի դարձնել ներսի զուգարանները: Եթե ներսի զուգարանները հասանելի են, պետք է իրականացվեն հետևյալ նախազուգական միջոցառումները.
 - Միջոցառման համար օգտագործվող բացօթյա տարածքից նշվում է երթուղի դեպի ներսում գտնվող զուգարանները:
 - Ժապավեն կամ այլ գծանշաններ են օգտագործվում ներկաների ֆիզիկական հեռավորությունն ապահովելու համար, եթե նրանք պետք է հերթ կանգնեն զուգարան օգտագործելու համար:
 - Ներկաներին խրախուսվում է ծառայության կամ միջոցառման ընթացքում անհրաժեշտության դեպքում զուգարանից օգտվել, որպեսզի խուսափել վերջում մարդկանց կուտակումներից:
 - Չուգարանները պետք է պատշաճ աշխատեն և համալրված լինեն համապատասխան օճառով և մեկանգամյա օգտագործման սրբիչներով՝ ձեռքերի լվացումն ապահովելու համար:
 - Չուգարանների պարագաները պետք է այնպես դասավորված լինեն, որ հնարավոր լինի դրանց պատերից դուրս ֆիզիկական հեռավորություն պահպանել:
 - Անձնակազմից մեկը (կամ աշխատողները, եթե կա ավելի քան մեկ սենյականոց զուգարանի տարբերակ) պետք է կրի կտորե դիմակ և կանգնի զուգարանի մուտքի մոտ՝ մոտակա ժամանող կամ մեկնող անձից առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա՝ դիմակների օգտագործումն ու սենյակի զբաղվածությունը վերահսկելու համար:

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Հուղարկավորությունների Ղեկավարում

- Հարկավոր է պահպանել ֆիզիկական հեռավորության կանոնները:
 - Նկատի ունեցե՛ք, որ ֆիզիկական հեռավորություն պահպանելու պահանջը ՉԻ վերաբերվում միևնույն ընտանեկան տնտեսության անդամներին: Մարդիկ, ովքեր միասին են ապրում կարող են նստել կամ կանգնել միմյանց մոտ՝ 6 ոտնաչափ հեռավորություն պահպանելով մյուս ընտանեկան խմբից կամ մյուս մասնակիցներից:
 - Հուղարկավորության անձնակազմը կարող է ուղղորդել մասնակիցներին՝ կանգնելու միմյանցից 6 ոտնաչափ հեռավորության վրա գտնվող կետերում, կամ կարելի է նշումներ կիրառել՝ սահմանելու պահանջվող հեռավորությունը կամ այլ միջոցներ օգտագործել, որպեսզի ապահովվի սգավորների միջև համապատասխան հեռավորությունը:
 - Ծնողները կամ ընտանեկան տնտեսության այլ անդամները պետք է ապահովեն ներկա երեխաների անվտանգ մասնակցությունը:
 - Կախված երեխայի տարիքից և ընտանիքի նախապատվություններից՝
 - Ծառայության ընթացքում երեխաներին հարկավոր է տեղավորել զբոսասայլակի կամ այլ տեղափոխող հարմարանքի մեջ;
 - Երեխաները կարող են նստել կամ կանգնել պատասխանատու չափահասի կողքին; կամ
 - Երեխաներին կարող է թույլատրվել կանգնել կամ նստել սգավորների խմբից առանձին, բայց բավարար մոտ, որպեսզի չափահասի ուշադիր հսկողության տակ լինեն և ֆիզիկապես հեռու գտնվեն այլ երեխաներից և մասնակիցներից, ովքեր այլ ընտանիքներում են ապրում:
 - Հրավիրված ընտանիքները պատասխանատու են հանձնարարելու և ապահովելու, որ իրենց երեխաները չդիպչեն որևէ մեկին, ով իրենց ընտանեկան տնտեսության անդամ չի հանդիսանում, կամ որևէ իրի, որն իրենց չի պատկանում:
- Աշխատակազմը տեղակայված է ըստ անհրաժեշտության՝ ապահովելու համապատասխան ֆիզիկական հեռավորությունը և ուղղորդելու երթևեկության հոսքը՝ միջոցառման տարբեր փուլերի ընթացքում: Հարկավոր է քայլեր ձեռնարկել՝ խուսափելու ծառայության մասնակիցների շրջանում COVID-19-ի տարածումից:
 - Հրավիրվածներին հարկավոր է հրահանգել, որ գերծ մասն միջոցառմանն անհատապես մասնակցելուց, եթե հայտանաբերվել է, որ նրանք COVID-19 ունեն, COVID-19*-ի հետ համընկնող ախտանիշներ ունեն կամ շփվել են որևէ մեկի հետ, ով COVID-19 դրական է թեստավորվել:
 - Անհատների ժամանելուն պես հարկավոր է բանավոր ստուգել նրանց շնչառական ախտանիշների առկայությունը (օր.՝ հազ, շնչարգելություն կամ դժվար շնչառություն) և/կամ ջերմություն: Անհատներին, ովքեր շնչառական ախտանիշներ կամ ջերմություն ունեն, պետք է խնդրեն տուն վերադառնալ: Առաջարկվում է, որ նրանք զանգահարեն իրենց բուժաշխատողին՝ COVID-19-ի թեստավորման և մեկուսացման անհրաժեշտության հետ կապված: Հավելյալ տեղեկությունների համար, այցելե՛ք ph.lacounty.gov/covidcare.

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Լուս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Զուղարկավորությունների Ղեկավարում

- COVID-19-ով վարակվելու արդյունքում ծանր հիվանդանալու վտանգի տակ եղած անձանց (65 կամ ավելի բարձր տարիքի մարդիկ, քրոնիակական շնչառական կամ իմունային համակարգի խնդիրներ ունեցողները) խրախուսվում է չմասնակցել՝ իրենց իսկ պաշտպանության համար:
 - Ծառայությունը կարող է ուղիղ հեռարձակվել՝ թույլ տալու բոլոր նրանց վիրտուալ մասնակցությունը, ովքեր չեն կարողացել անվտանգ ձևով ներկա գտնվել (տես՝ [Զուղարկավորության Տնօրենների Ազգային Անցիպացիայի](#) կողմից տրամադրված վեբ-հեռարձակման ռեսուրսներ): Արարողությունը կարելի է նաև նկարահանել՝ հետագայում դիտելու համար:
- Բոլոր մասնակիցներին, բացառությամբ 2 տարեկանից փոքր երեխաներին կամ այն անձանց, ովքեր առողջական խնդիրներ ունեն, որոնք խոչընդոտում են դեմքի ծածկոցի կիրառումը՝ ըստ բուժաշխատողի ցուցումի, հուղարկավորության ծառայության ամբողջ ընթացքում հրահանգված է [կտորե դիմակներ](#) կրել:
- Հարկավոր է տրամադրել անձեռոցիկներ և սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոցներ՝ ընտանիքների և աշխատողների օգտագործման համար, և զուգարանները պետք է հագեցած լինեն օճառի և թղթե սրբիչների բավարար քանակությամբ: Պետք է առկա լինեն աղբամաններ՝ անձեռոցիկները և թղթե սրբիչները դնել նետելու համար:
- Մարդիկ չպետք է հավեն կամ համբուրեն մեկի մարմինը, ով մահացել է COVID-19-ով: Այնուամենայնիվ հավելու դեպքում, սովյալ անձը պետք է լվանա ձեռքերը կամ ձեռքերի ախտահանիչ միջոց օգտագործի՝ մինչև իր դեմքին կամ որևէ այլ բանի, կամ այլ մարդու հավելը:
- Զուղարկավորության և դրա հետ կապված ծառայությունների և միջոցառումների ընթացքում հարկավոր է օգտվել բացօթյա տարածքներից:
- Հարկավոր է հնարավորինս սահմանափակել իրերի ընդհանուր օգտագործումը: Պետք է խուսափել այնպիսի իրերի, սարքավորումների և/կամ ապրանքների օգտագործումից, որոնք կարող է դժվար լինել ախտահանել, կամ որոնք կդժվարեցնեն ֆիզիկական հեռավորության պահպանման ապահովումը (օր.՝ վրանի պատեր):
 - Եթե միջոցառման համար ծրագիր է տրամադրվում, այն պետք է մեկանգամյա օգտագործման տարբերակով լինի:
 - Առարկաները, որոնք պետք է ընդհանուր օգտագործվեն, որպես որոշակի ծառայության մաս, օգտագործումների միջև ախտահանվում են:
- Արգելվում է ինքնասպասարկման տարբերակով սննդամթերք կամ խմիչքներ առաջարկելը:
- Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչությունը հրահանգում է, որ «այնպիսի գործողություններ, ինչպիսիք են երգելը և վանկարկելը չեղարկում են վտանգի նվազեցումը, որին հնարավոր է հասնել վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանելով», քանի որ արտաշնչվող կաթիլների միջոցով վարակի փոխանցման մեծ հավանականություն կա:

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Հուղարկավորությունների Ղեկավարում

- Արվելու դեպքում, այս գործողությունները պետք է իրականացվեն բացօթյա վայրերում, շատ ավելի մեծ ֆիզիկական հեռավորության պայմաններում կամ այլընտրանքային մեթոդներով (օրինակ՝ ինտերնետային հեռարձակում), որի ժամանակ հավատացյալ խմբի անհատները այս գործողություններն իրականացնում են իրենց տներում:
- Խնդրում ենք վերանայել Երկրպագության վայրերի և Կրոնական ծառայություններ և Մշակութային արարողություններ մատուցողների վերաբերյալ Լոս Անջելես Շրջանի փոփոխված ուղեցույցը [այստեղ](#):

*COVID-19-ի ախտանիշները կարող են ներառել հետևյալ ախտանիշների որոշ համադրություններ՝ ջերմություն, հազ, շնչարգելություն կամ դժվարացած շնչառություն, դող, մկանային կամ մարմնի ցավ, գլխացավ, կոկորդի ցավ, քթի խոռոչների լցվածություն, քթահոսություն, փորլուծություն, սրտխառնոց կամ փսխում կամ համի ու հոտի նոր կորուստ: Այս ցուցակը չի ներառում բոլոր ախտանիշները: